

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունիս, 2016



Բովանդակություն

Բովանդակություն	1
Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր	2
Ֆինանսական դիրք	3
Վարկային պորտֆել և համեմատականներ	4
Տրամադրված վարկերի ծավալը	4
Վարկերի կառավարում	7
Վերլուծական գործակիցներ	8


Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր

ՀՀ վարկային կազմակերպությունների միության անդամներն իրենց տնտեսական գործունեության վերաբերյալ ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն (ՀՀ ՎԿՄ) ամսական կտրվածքով տրամադրում են տասը տնտեսական ցուցանիշներ: Այդ ցուցանիշների հիման վրա Վարկային կազմակերպությունների միությունն իրականացնում է ֆինանսական վերլուծություն, որի նպատակն է միության անդամներին ներկայացնել վարկային ինդուստրիայում տեղի ունեցող տնտեսական շարժերը: Ցուցանիշների մի մասը հրապարակային տեղեկատվություն է, որոնք տեղ են գտնում վարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում: Սակայն սույն վերլուծության համար ՎԿՄ-ի անդամ կազմակերպությունների կողմից տրամադրվում են նաև այնպիսի տնտեսական ցուցանիշներ, որոնք տեղ չեն գտնում հրապարակային եռամսյակային հաշվետվությունների մեջ:

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿՄ անդամների համախառն ակտիվները 2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել են 113.1 մլրդ դրամ՝ 2015թ.-ի հունիսի նկատմամբ ունենալով 2.9% աճ, իսկ 2016թ.-ի մայիսի նկատմամբ՝ 0.9%-ով (Գժ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը 2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 97.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հունիսի նկատմամբ ունենալով նվազելով 2.5%-ով, իսկ 2016թ. մայիսի նկատմամբ՝ 0.9 %-ով:
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալը 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ կազմել է 35.3 մլրդ դրամ՝ 2015թ.-ի հունիսի նկատմամբ աճելով 3.4%-ով, իսկ 2016թ.-ի մայիսի նկատմամբ՝ 1.9%-ով:

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿՄ անդամների ֆինանսական դիրքը 2015-2016թթ.-ների հունիսի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2016թ.-ի հունիս ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 6.9 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 4.1%-ով, իսկ 2016թ.-ի մայիսի նկատմամբ աճել է 5.2%-ով (Գժ. 2):


Գծապատկեր 2. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-հունիս ամսին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը

- 2016թ.-ի հունիս ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 10,214 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 6.4%-ով, իսկ 2015թ.-ի հունիսի նկատմամբ 11.1%-ով (Գծ. 3):
- 2016թ.-ի հունիս ամսի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամները ունեցել են 144,197 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2015թ.-ի հունիսի նկատմամբ նվազել է 1.3%-ով, իսկ 2016-ի մայիսի նկատմամբ՝ 0.05%-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2016թ.-ի հունիսին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 674 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը՝ 673 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2015թ.-ի հունիսին կազմել են համապատասխանաբար՝ 683 և 779 հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-հունիս ամսին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծությունը




Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2016թ.-ի հունիսի դրությամբ միության անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 126 մասնաճյուղ, որը, համեմատած 2015թ.-ի հունիսի հետ աճել է 3-ով:

- ՀՀ ՎԿՄ անդամները 2016թ.-ի հունիսի դրությամբ ունեցել են 604 վարկային մասնագետ, որը 19-ով նվազել է 2015թ.-ի հունիսի աշխատակիցների թվի համեմատ:
- 2016թ.-ի հունիսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկային պորտֆելը կազմել է 11.38 մլն դրամ, նախորդ ամսին՝ 10.9 մլն դրամ, իսկ 2015թ.-ի հունիսի համեմատ այն կազմել է 11.5 մլն դրամ: (Գծ. 5):
- 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 161.0 մլն դրամ, նախորդ ամսվա 163.8 մլն դրամի և 2015թ.-ի հունիսի 160.03 մլն դրամի համեմատ:

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿՄ անդամների միջին վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով




Վարկերի կառավարում

- Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել: ՀՀ ՎԿՄ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ կազմել է 1,204.6 մլն դրամ, նախորդ ամսվա 1,150.2մլն դրամի և 2015թ.-ի հունիսի՝ 1,089.0 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 10.6%-ով, իսկ 2016թ.-ի մայիսի նկատմամբ 4.7%-ով: 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.24%-ը, 2016թ.-ի մայիսին՝ 1.17%-ը (Գծ. 6):

- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿՄ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ կազմել է 3,392.0 մլն դրամ, նախորդ ամսվա 3,726.0 մլն դրամի և 2015թ.-ի հունիսի՝ 2,468.1 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 37.4%-ով, իսկ 2016թ.-ի մայիսի նկատմամբ նվազել է 9%-ով: 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 3.49%-ը, 2016թ.-ի մայիսին՝ 3.8%-ը:
- **Զուտ դուրսգրումներ:** 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ միության անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 2,359.3 մլն դրամ, նախորդ ամսվա 2,089.4 մլն դրամի և 2015թ.-ի հունիսի՝ 987.1 մլն դրամի համեմատ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2016թ.-ի հունիսին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 12.9%-ով, իսկ 2015թ.-ի հունիսի նկատմամբ՝ մոտ 1.4 անգամ: Միության անդամների սույն թվականի մայիսին զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 2.43%-ը, նախորդ ամսվա 2.13%-ի և 2015թ.-ի հունիսի 0.99%-ի համեմատ:

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿՄ անդամների վարկերի ծավալները հունիսի 30-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2016թ.-ի հունիսի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 85.9%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2015թ.-ի հունիսին կազմել է 90.7% (Գձ. 7):
- Սույն թվականի հունիսի դրությամբ միության անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 36.3%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ միության անդամների վարկավորման ծավալի ավելի քան 36%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2015թ.-ի հունիսին կազմել է 34.2%:
- 2016թ.-ի հունիսի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 31.2%, որը վկայում է միության անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2015թ.-ի հունիսին կազմել է 31.0%:
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2016թ.-ի հունիս ամսվա դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համար այս գործակիցը կազմել է 2.20, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.20 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա հունիսի համար կազմել է 2.22:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿՄ անդամների վերլուծական գործակիցներ

